ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

“ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ IDF ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ”
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀ # TF 011972

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ SCRRU C-2.3

Հայաստանի Հանրապետությունը «Հայաստանի Հանրապետության կառավարության կարգավորիչ բարեփոխումների ստորաբաժանման կարողությունների հզորացման ծրագիր» ԻԶՀ դրամաշնորհային ծրագրի իրականացման նպատակով ՀԲ-ից ստացել է ֆինասավորում և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների մատուցման դիմաց:

Խորհրդատվական ծառայության, ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ԿԱԳ), նպատակն է զարգացնել համապատասխան ունակություններ Կառավարությունում, ինչի արդյունքում կզարգանա կարգավորման դաշտը եւ կկարգավորվի նոր օրենսդրական ակտերի հոսքը ԿԱԳ-ի մոտեցումը կիրառելու միջոցով, կնվազեցվի նոր կարգավորումների բեռը ՀՀ բիզնեսների եւ քաղաքացիների վրա:

Բարեփոխման իրականացման համար պահանջվում է փորձառու միջազգային Խորհրդատու՝ ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից ԿԱԳ-ի և ՀՀ-ում ԿԱԳ-ի հետ առընչվող քաղաքականությունների ուսումնասիրման գործում աջակցելու համար, ինչպես նաեւ լավագույն միջազգային փորձը ներկայացնելու համար, ինչը հնարավորություն կտա բարեփոխմանն առավել արդյունավետ օգտագործել իր ռեսուրսները:

Խորհդատուն կաջակցի Պատվիրատուին՝ համապատասխան ԿԱԳ մեթոդ եւ ինստիտուցիոնալ իրականացման ռազմավարություն մշակել, փորձնական ԿԱԳ-ի ժամանակ ԿԱԳ մեթոդը եւ գործընթացները թեստավորելուն, ինչպես նաեւ նախարարություններում համապատասխան ունակությունների զարգացման գործում՝ ՀՀ-ում ԿԱԳ-ի իրականացմանը նպաստելու համար:

Ծրագրին անհրաժեշտ են Խորհրդատուի ծառայութնուններ կարգավորիչ ազդեցության վերլուծության բնագավառում Պատվիրատուին աջակցելու համար, որպեսզի վերջինս ՀՀ-ում ԿԱԳ-ի եւ ԿԱԳ-ին վերաբերող քաղաքականության, ինչպես նաեւ միջազգային լավագույն փորձի համապարփակ ուսումնասիրություն կատարի, ինչը ծրագրին հնարավորություն կտա կարողությունների զարգացումն առավել արդյունավետ իրականացնել:

Ուստի ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն և ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ն հրավիրում են պահանջներին համապատասխանող բոլոր անհատ

խորհրդատուներին ներկայացնել ծառայությունների մատուցման առնչությամբ հետաքրքրվածության իրենց հայտերը:

Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական թերթիկ, ինչպես նաեւ այլ տեղեկատվություն՝ մատնանշելով, որ վերջիններս համապատասխան որակավորում ունեն վերոնշյալ ծառայությունների մատուցման համար:

Հանձնարարականն իրականացնելու համար անհատ խորհրդատուին կտրամադրվի մոտ 6 ամիս:

Որակավորում եւ պահանջներ

Հանձնարարականի իրականացման համար կվարձվի անհատ խորհրդատու, որը պետք է համապատասխանի հետևյալ որակավորման պահանջներին՝

- Բարձրագույն կրթություն սոցիալական գիտությունների/տնտեսագիտության ոլորտում
- Կարգավորիչ ազդեցության գնահատման խորը գիտելիքներ եւ փորձ
- Միջազգային կազմակերպություններում կարգավորիչ գնահատման ոլորտում բարեփոխումներ կատարելու խորհրդատվական փորձ Կարգավորիչ ազդեցության վերլուծության բնագավառում
- Երկրում կամ տարածաշրջանում կարգավորիչ ազդեցության գնահատում իրականացնելու փորձ
- ԵՄ կամ ԵՄ երկրներում կարգավորիչ ազդեցության գնահատման փորձը առավելություն է
- Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ հաջողված աշխատանքը առավելություն է
- Աշխատանքային փորձը Հայաստանում եւ/կամ նախկին Խորհրդային Միության երկրներում եւ/կամ Արեւելյան Եվրոպական երկրներում առավելություն է
- Հետազոտելու, հաղորդակցման եւ ներկայացման գերազանց ունակություններ
- Անգլերենի գերազանց իմացություն:

Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային բանկի՝ «ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձման Ուղեցույցների» (2011 թ. հունվար, խմբագրված՝ 2014 թ. հուլիսին) («Խորհրդատուի ուղեցույց») 1.9 պարագրաֆին, որտեղ սահմանված է շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությանը:
Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն 2011թ. հունվարին հրատարակված ՀԲ Ուղեցույցների՝ ՀԲ վարկառուների կողմից խորհրդատուների ընտրություն եւ վարձում, շրջանակներում սահմանված Բաժին V-ում ներկայացված Անհատ խորհրդատուների ընտրության մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացված հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ էլ-փոստով) **մինչեւ 2015 թ. մարտի 30-ը, ժամը 18:00**:

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ, Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-11) 91 05 81, (374-10) 52 34 71
Ֆաքս՝ (374-10) 54 57 08
Էլ-փոստ՝ info@ffpmc.am